ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սոցիոլոգիական հետազոտությունը գիտական տեխնոլոգիա է, որն այսօր հաջողությամբ կիրառում են ոչ միայն սոցիոլոգները, այլև հասարակության ուսումնասիրությամբ զբաղվող մնացած բոլոր գիտակարգերի ներկայացուցիչները: Այն յուրահատուկ կամուրջ է կառուցում տեսության և իրականության միջև ու ապահովում դրանց մշտական կապը՝ հետազոտողին օգնելով գտնել այն հարցերի պատասխանները, որոնք ծագում են թե՛ տեսության մեջ, թե՛ պրակտիկայում: Նախաձեռնելով սոցիոլոգիական հետազոտություն՝ հետազոտողը մեկնարկում է տեսությունից, նախապես պատրաստված գործիքների միջոցով հավաքում անհրաժեշտ տեղեկատվությունը և ստուգում իր գիտական ենթադրությունները: Ընդհանուր առմամբ սոցիոլոգիական հետազոտությունը մեթոդաբանական, մեթոդական և կազմակերպական-տեխնիկական հաջորդական ընթացակարգերի ամբողջություն է: Ինչպես որևէ շենք կառուցելուց առաջ նախ ստեղծում են նրա նախագիծը, այնպես էլ սոցիոլոգիական հետազոտությունն իրականացնելուց առաջ հարկավոր է ունենալ հետազոտական նախագիծ: Հմուտ հետազոտողը մինչ այդ կազմում է հետազոտության ծրագիրը, որը յուրահատուկ կողմնացույցի դեր է կատարում հետազոտության ողջ ընթացքում: Այն թույլ է տալիս հետազոտությունը դարձնել նպատակասլաց, խուսափել ավելորդ քայլերից, արդյունավետ ծախսել բոլոր միջոցները:

Հետազոտության ծրագիր կազմելը հետազոտության ամենաբարդ մասն է, որի պատճառով թերևս որոշ հետազոտողներ խուսափում են կառուցելուց: Սոցիոլոգիական հետազոտության ծրագիրը մի փաստաթուղթ է, որը սահմանում ու նկարագրում հետազոտության կմախքը կազմող մեթոդաբանական և մեթոդական գործողությունները: Կազմել սոցիոլոգիական հետազոտության լավ ծրագիր նշանակում է ստեղծել հաջող ու արդյունավետ հետազոտության հիմնավոր երաշխիք, որովհետև ծրագիր կոչվող այդ փաստաթուղթը ստեղծելու համար հետազոտողը մտովի պետք է իրականացնի հետազոտության ընթացքում նախատեսվող բոլոր քայլերը: Առանց ծրագրային փաստաթղթի հետազոտողի գործողությունները դաշտում նման են կույր մարդու գործողությունների, որը շոշափելով փորձում է գտնել իր ճանապարհը: Սոցիոլոգիայի խորհրդային դպրոցը լուրջ ուշադրություն էր դարձնում սոցիո-

լոգիական հետազոտության ծրագրի մշակմանը: Այդ դպրոցի ներկայացուցիչների աշխատանքներում նույնիսկ նկատվում է սոցիոլոգիական հետազոտության ծրագրին առնչվող մեթոդաբանական խնդիրների մշակվածության ավելի բարձր մակարդակ, քան նրանց արևմտյան գործընկերների մոտ[1]: Չնայած դրան, տարբեր առիթներով դիտարկելով սոցիոլոգիական հետազոտությունների ծրագրերը՝ հաճախ են վեճեր ծավալվում դրանց այս կամ այն բաժնի բովանդակության շուրջ:

Հետազոտությունն սկսվում է այնտեղ և այն ժամանակ, երբ հետազոտողը բախվում է խնդրահարույց իրադրության: Սոցիալական իրականությունը լի է նման իրավիճակներով, քանի որ իր զարգացման ընթացքում այն հետազոտողին առաջադրում է նորանոր հարցականներ, որոնց պատասխանների որոնումն էլ «սոցիոլոգիա» գիտության և այն ներկայացնող մասնագետների գերագույն նպատակն է: Սոցիոլոգ հետազոտողի համար նոր հետազոտություն նախաձեռնելու առաջին ազդակը խնդրահարույց իրավիճակն է, որին նա կարող է բախվել տարբեր առիթներով: Այդպիսի իրավիճակներն արդեն վաղուց հայտնի ու բացատրված խնդիրներին զուգահեռ պարունակում են նոր տարրեր կամ վիճակներ, որոնք հետազոտողի գիտակցության մեջ ծնում են հակասություն իմացածի և անհայտի միջև: Սոցիոլոգիական գրականության մեջ խնդրահարույց իրավիճակին և հետազոտության հիմնախնդրին անդրադառնալիս հեղինակները հաճախ նկատի են ունենում իրադրությունը, որը պարունակում է հակասություն: Մի կողմ թողնելով այն փաստը, որ սոցիալական իրականությունը զարգանում է հակասություններով՝ հարկավոր է նշել, որ սոցիալական իրավիճակը կամ իրադրությունը դառնում է հետազոտության տեսանկյունից խնդրահարույց ոչ թե այն պատճառով, որ պարունակում է հակասություն, այլ դրան ծանոթանալիս հետազոտողի գիտակցության մեջ է ծագում հակասություն արդեն իմացածի և նորի միջև, և պարտադիր չէ, որ այդ նորը լինի սոցիալապես անցանկալի երևույթ: Օրինակ՝ հետազոտողը սեփական դիտարկումների հիման վրա կարող է հանգել ենթադրության, որ մարդկանց սպառողական վարքագիծը փոխվել է, կամ փոխվել են երիտասարդության արժեքային կողմնորոշումները և այլն: Երկու դեպքում էլ հակասությունը նրա սպասումների և իրականության միջև է, իսկ սպասումները ձևավորվում են նախորդ հետազոտությունների արդյունքում: Բախվելով նոր իրավիճակին՝ հետազոտողը սկսում է հետազոտություն այդ նորը բացատրելու ու հիմնավորելու համար: Խնդրահարույց իրավիճակի հիման վրա հետազոտողը ձևակերպում է հետազոտական հիմնախնդիրը, որի լուծմանն էլ ծառայում է սկսվող հետազոտությունը: Սահմանել հետազոտության հիմնա-

[1] Տե՛ս Рабочая книга социолога. М.,1983; **Здравомыслов А. Г**. Методология и процедура социологических исследований. М., 1969; **Ядов В. А.** Социологическое исследование: методология, программа, методы. М.,1987; Как провести социологическое исследование: В помощь социологическому активу. М., 1985:

խնդիրը նշանակում է, խնդրահարույց իրավիճակը նկատի ունենալով, ձևակերպել այն հարցը, որի պատասխանը տալու է տվյալ հետազոտությունը: Հաճախ հետազոտության հիմնախնդիրը նույնացնում են սոցիալական հիմնախնդրի հետ: Իրականում դրանք տարբեր բաներ են: Սոցիալական հիմնախնդիրն այն երևույթն է, որն արգելակում, դժվարացնում է մարդկանց բնականոն կյանքը: Օրինակ՝ այսօր Հայաստանում սոցիալական շատ սուր հիմնախնդիրներ են աղքատությունը և գործազրկությունը, կանանց հանդեպ ընտանեկան բռնությունները: Հետազոտական կամ գիտական հիմնախնդիրները կարող են բազմազան ու բազմաթիվ լինել. օրինակ՝ ինչպես պաշտպանել երեխաներին աշխատանքային շահագործումից, ինչպես կրճատել աղքատությունը երկրում: Հետազոտության հիմնախնդիրը կարող է նաև սոցիալական հիմնախնդիր չլինել՝ օրինակ, որո՞նք են այսօր Հայաստանում ծնելիությունը պայմանավորող գործոնները, ինչպիսի՞ն են ժամանակակից հայ երիտասարդության արժեքային կողմնորոշումները և այլն: Վ. Յադովն իր աշխատություններից մեկում, խոսելով հետազոտական հիմնախնդրի մասին, ինքնաբերաբար որպես հոմանիշ օգտագործում է «սոցիալական հիմնախնդիր» եզրույթը և հետո շարանակում կիրառել այն հետայդու[2]: Մեկ այլ աղբյուրում հետազոտական հիմնախնդիրը ներկայացվում է որպես խնդրահարույց իրադրության գիտական արտացոլման ձև, իսկ վերջինս էլ՝ որպես հետազոտության օբյեկտում զարգացման ընթացքում առաջացող վիճակ, որը չի համապատասխանում հետագա զարգացման կարիքներին[3]: Իհարկե, երբեմն կյանքը ստեղծում է իրավիճակներ, որոնք սոցիալապես անցանկալի են, և հասարակությունը փորձում է գիտնականների, այդ թվում և սոցիոլոգների օգնությամբ գտնել դրանց հաղթահարման ուղիները, ու նման դեպքերում նույնպես իրականացվում են սոցիոլոգիական հետազոտություններ: Սակայն սրանից չի հետևում, որ սոցիոլոգիական բոլոր հետազոտությունները իրականացվում են սոցիալական հիմնախնդիրների հաղթահարման նպատակով: Սոցիոլոգիան որպես գիտություն անընդհատ ընդլայնում է իրականության ճանաչման շրջանակները, և հետազոտողները կատարում են սոցիոլոգիական հետազոտություններ, որոնց հիմքում ընկած հետազոտական հիմնախնդիրը բոլորովին էլ սոցիալական չէ բառի ուղղակի իմաստով:

Լիովին իրավացի է Գ. Անդրեևան, երբ նշում է, որ այն դեպքում, երբ սոցիալական հիմնախնդիրը կյանքն է առաջադրում, հետազոտական հիմնախնդիրը պայմանավորված է գիտելիքների պակասով և պահանջում է կատարել հետազոտություն[4]: Սոցիոլոգիական հետազո-

---

[2] Տե՛ս **Ядов В. А.** Стратегия социологического исследования. М., 1998, էջ 71-75:

[3] Տե՛ս **Добреенков В. И., Кравченко А. И.** Методы социологического исследования. М., 2004, էջ 152:

[4] Տե՛ս Лекции по методике конкретных социальных исследований. М., 1972, էջ 6:

տության ծրագրում սահմանված հետազոտական հիմնախնդիրը նաև հուշում է, թե ինչ տիպի հետազոտություն է իրականացվելու՝ հետախուզակա՞ն, նկարագրակա՞ն, թե՞ բացատրական: Մյուս կողմից այն մատնանշում է հետազոտության ուղղվածությունը՝ տեսակա՞ն, թե՞ գործնական: Հետազոտության յուրաքանչյուր տիպ կամ տեսակ հետազոտողին պարտադրում է ընտրել հետազոտական որոշակի ռազմավարություն ու մարտավարություն, մշակել համապատասխան մեթոդաբանություն ու մեթոդիկա, ստեղծել ու կիրառել համապատասխան գործիքակազմ: Հետազոտության ծրագրում ամրագրվում է հետազոտության տրամաբանությունը, որը հետազոտողն է կառուցում, բայց որը, փաստաթղթի տեսքով անկախանալով նրանից, վերջինիս և հետազոտական խմբի մյուս անդամներին տանում է իր հետևից՝ կանխելով անցանկալի շեղումները:

Ոչ միանշանակ մեկնաբանությունների է արժանանում նաև սոցիոլոգիական հետազոտության օբյեկտի սահմանումը: Արևմտյան գրականության մեջ հետազոտողներն այս խնդրին համարյա չեն անդրադառնում: Նրանց համար ամենակարևորը հետազոտական հիմնախնդրի՝ հարցի ձևակերպումն է: Հետխորհրդային տարածքում այս առումով շարունակվում է շրջանառվել դեռևս խորհրդային տարիներին ձևավորված պատկերացումը, ըստ որի՝ հետազոտության օբյեկտը հիմնախնդիրը կրողն է[5]: Երբեմն սոցիոլոգիական հետազոտության օբյեկտը սահմանվում է որպես «…որոշակի սոցիալական դիրք զբաղեցնող մարդկանց գործունեությունը և այդ գործունեության իրականացման պայմանները»[6], կամ էլ դրա տակ նկատի է առնվում այն ամենը (երևույթ, առարկա, մարդ), ինչը/որը/ում ուղղված է ճանաչողության գործընթացը[7]: Հետազոտության օբյեկտը այն է, ինչը կրում է հիմնախնդիրը, այսինքն՝ հակասությունն այդտեղ է, պնդում են շատ հետազոտողներ[8]: Այսինքն՝ ստացվում է, որ «սոցիալական հակասությունը» ընկած է խնդրահարույց իրադրության հիմքում, և հետազոտության «օբյեկտն էլ այն է, պարունակում է այդ հակասությունը»: Իրականում հակասությունը հետազոտողի սպասումների և իրականության միջև է: Օրինակ՝ եթե մենք դիտարկումների արդյունքում արձանագրում ենք, որ մանկության շրջանում ընտանեկան բռնության զոհ դարձածները հետագայում ավելի հաճախ են դառնում բռնացողներ, ապա նման տեղեկությունն առաջացնում է մեր զարմանքը, և մենք արձանագրում ենք հակասություն մեր սպասումների ու իրականության միջև: Այստեղից

---

[5] Տե՛ս **Добреенков В. И., Кравченко А. И.,** նշվ. աշխ., էջ 163:

[6] Рабочая книга социолога. М., 1983, с. 114.

[7] Տե՛ս **Ядов В. А.,** Стратегия социологического исследования, էջ 75:

[8] Տե՛ս **Ядов В. А.** Стратегия социологического исследования, М., 2007, էջ 62-63; **Шарков Ф. И.** Социология: теория и методы: учебник. М., 2002; **Тавокин Е. П**. Основы методики социологического исследования: учеб.пособие. М., 2009, էջ 18-19; **Капитонов Э. А**. Социология XX века. Ростов-на-Дону, 1996, էջ 395:

կարելի է անել հետևություն, որ սոցիոլոգիական հետազոտության օբյեկտի դերում կարող են հանդես գալ սոցիալական ցանկացած երևույթ, սոցիալական ինստիտուտ, մարդիկ և այլն:

Օբյեկտ հասկացությունը ճանաչողության գործընթացի համատեքստում նկատի է ունենում գործընթացի պասիվ կողմը, այն, ինչը կամ ով ուսումնասիրության է ենթարկվում: Որպես կանոն, մյուս՝ ակտիվ կողմը սուբյեկտն է՝հետազոտողը: Ճանաչողության որ ոլորտն ու ձևն էլ վերցնենք, ճանաչողը ունենում է սուբյեկտի կարգավիճակ: **Սուբյեկտ - օբյեկտ** հասկացությունները հակադրամիասնություն են, դրանք գոյություն չունեն միմյանցից առանձին: Հետազոտության օբյեկտն ամփոփում է հետազոտության հիմնախնդիրը կամ, այլ կերպ ասած, հակասություն է առաջացնում հետազոտողի գիտակցության մեջ, հակասություն հետազոտության օբյեկտի և առարկայի մասին իր գիտելիքների և դրանց նոր վիճակի միջև: Այդ նորը առաջանում է դրանց փոփոխությունների շնորհիվ: Քանի որ իրականության փոփոխություններն անվերջ են, ճանաչողության գործընթացն էլ է անվերջ. այն միշտ փորձում է որոնել հարցերի պատասխանները, որոնք ծագում են հետազոտողի գլխում, երբ նա զննում է իրականությունը: Գիտությունը՝ որպես սոցիալական ինստիտուտ, փորձում է բավարարել հասարակության պահանջմունքները գիտելիքի նկատմամբ, և գիտնականներն անընդհատ որոնումների մեջ են: Հասարակական շահը նրանց ստիպում է գիտության տարբեր ոլորտներում որոնել և գտնել անընդհատ ծագող հարցերի պատասխանները, հետազոտել: Իհարկե, որպես սոցիոլոգիական հետազոտության օբյեկտ կարող են առանձնացվել սոցիալական իրականության մաս կազմող ցանկացած երևույթ, առարկա, սակայն չպետք է մոռանալ, որ այդ իրականությունը զարգանում է մարդկանց գործունեության արդյունքում: Վերջին հաշվով սոցիալական շարժման սուբստրատը մարդն է, հետևաբար՝ ինչպիսին էլ լինի հետազոտության հիմնախնդիրը, դրա կրողը մարդն է, այդ մարդու գործունեության արդյունքում է առաջանալու խնդրահարույց իրավիճակը, որն էլ, անհանգստացնելով հետազոտողին, նրան մղելու է հետազոտության: Պրոֆեսոր Շարկովի կարծիքով՝ «հետազոտության օբյեկտը այն ամենն է, ինչը պարունակում է սոցիալական հակասություն և ծնում է խնդրահարույց իրավիճակ»[9]: Ըստ նրա՝ հետազոտության օբյեկտը մարդիկ են, որովհետև «սոցիալական հակասությունների կրողը միշտ մարդիկ են»[10]: Իհարկե, սոցիալական իրականությունը լի է հակասություններով, և դրանք են նպաստում նրա զարգացմանը, սակայն պետք է առարկենք այն պնդմանը, որ սոցիոլոգիական հետազոտության օբյեկտը պարունակում է «սոցիալական հակասություն», հետևա-

[9] **Шарков Ф. И**. Указ. соч., с. 260.
[10] Նույն տեղում, էջ 13:

բար և՝ հետազոտական հիմնախնդիր: Իրականում հակասությունը ծագում է հետազոտողի մտքում, երբ նա համեմատում է խնդրահարույց իրադրությունն իր պատկերացումների հետ: Մարդն այն սուբյեկտն է, որի գործունեությամբ ձևավորվում է սոցիալական իրականությունը, հետևաբար սոցիոլոգիայի՝ որպես այդ իրականությունն ուսումնասիրող գիտության օբյեկտը և առարկան հարկավոր է որոնել մարդու և նրա գործունեության մեջ: Նման տեսակետ է պաշտպանում նաև Տոշչենկոն՝ ասելով, որ «...գիտական հիմնախնդիրը գոյություն չունի ինքն իրեն և միշտ ենթադրում է մարդկանց որոշակի հանրույթ և նրանց գործունեությունը, և նրանց, որոնց հետ այն կապված է: Հետևաբար լայն իմաստով սոցիոլոգիական հետազոտության օբյեկտը այս կամ այն հասարակական հիմնախնդրի կրողն է»[11]: Ինչպես նկատում ենք, այստեղ նույնպես «հետազոտության հիմնախնդիր»-ը փոխարինված է «հասարակական հիմնախնդիր» եզրույթով, որը, կարծում ենք, ճիշտ չէ: Իրականում սոցիոլոգիական հետազոտության օբյեկտը հետազոտության հիմնախնդիրը կրողն է: Իհարկե, եթե շատ լայն իմաստով ենք օգտագործում «սոցիալական» եզրույթը, ապա դրա տակ կարելի է նկատի ունենալ այն ամենը, ինչն առնչվում է հասարակությանը, այդ թվում և՝ հետազոտական հիմնախնդիրը: Սոցիոլոգիան գիտություն է, որն ուսումնասիրում է հասարակությունը, հետևաբար սոցիոլոգիական հետազոտության հիմնախնդիրը նույնպես սոցիալական երևույթ է: Բայց նորից ենք կրկնում՝ խոսքն այստեղ ոչ թե երևույթի սոցիալական կամ ոչ սոցիալական լինելու մասին է, այն՝ հիմնախնդիրը սոցիալակա՞ն է, թե՞ հետազոտական: Հետազոտողները հաճախ սոցիոլոգիական հետազոտության օբյեկտ ասելով նկատի են ունենում մարդկանց որոշակի բազմություն՝ երեխաներ, տարեցներ, ուսանողներ և այլն: Իրականում, երբ հետազոտողը փորձում է հետազոտական որևէ հիմնախնդիր լուծել, նրա տեսադաշտում միշտ օբյեկտն է՝ մարդկային որևէ տիպի տեսքով՝ ուսանող, միգրանտ, թոշակառու և այլն: Հետազոտության օբյեկտը խտացնում է հետազոտվող բազմության (ուսումնասիրվող համախմբության) հիմնական, էական հատկանիշները: Ստացվում է, որ հետազոտության ծրագրում հետազոտության օբյեկտն ու առարկան սահմանելիս պետք է նշել սոցիալական այն սուբյեկտը, որը կրում է խնդրահարույց իրավիճակը: Սոցիոլոգիական հետազոտության օբյեկտը ոչ թե մարդկային որևէ խումբ է, այլ այդ խումբը ներկայացնող միջին վիճակագրական ներկայացուցիչը՝ ամուսնալուծվողը, ուսանողը, իրավախախտը և այլն: Նա հանդես է գալիս որպես հավաքական գոյական, սոցիալական որևէ տիպ, որի ուսումնասիրության անհրաժեշտությունը թելադրում է կյանքը, և սոցիոլոգիական հետազոտության օբյեկտ ասելով պետք է նկատի ունենալ հենց

[11] **Тощенко Ж. Т**. Социология. М., 2001, с. 78.

այդ տիպը: Անկախ այն բանից, թե սոցիոլոգիական հետազոտությունը զանգվածային է եղել, թե ընտրանքային, հետազոտության վերջնական արդյունքները տարածվում են ուսումնասիրվող համախմբության յուրաքանչյուր տարրի վրա:

Սոցիոլոգիական հետազոտության առարկան օբյեկտի պարունակած կապերի ու հարաբերությունների ամբողջությունն է, որի վրա հետազոտողը սևեռում է իր ուշադրությունը տվյալ հետազոտության ընթացքում: Դա հետազոտության օբյեկտի այն հատկանիշն է, որն առանձնացվում է հետազոտողի կողմից և ուսումնասիրվում է տվյալ հետազոտության ընթացքում: Սոցիոլոգիական հետազոտության օբյեկտը և առարկան հարաբերվում են, ինչպես ամբողջը մասի հետ: Մեկ հետազոտության ժամանակ կարող ենք ունենալ մեկ օբյեկտ և սովորաբար նաև մեկ առարկա, չնայած որոշ դեպքերում հետազոտողը կարող է ավելացնել երկրորդ և ավելի առարկաներ: Այդ պայմանավորված է նրանով, որ հետազոտողը, հետազոտություն սկսելով, փորձում է հնարավորինս շատ տեղեկություններ հավաքել օբյեկտի մասին: Սակայն պետք է հիշել, որ այդ դեպքում հետազոտություն իրականացնելը գնալով դժվարանում է և գործնականում դառնում անիրագործելի: Օրինակ՝ եթե տեսականորեն կարելի է նախագծել հետազոտություն, որում օբյեկտը և առարկան նույնանում են, ապա գործնականում նման հետազոտությունն անիրագործելի է: Հետազոտության առարկան ուրվագծում է այն սահմանները, որոնցում հետազոտվում է օբյեկտը, և ցանկալի է, որ հետազոտության և՛ օբյեկտը, և՛ առարկան որոշակի լինեն տարածության և ժամանակի մեջ:

Սոցիոլոգիական հետազոտության ծրագիրը հետազոտողին ստիպում է ապահովել տեսության և սոցիալական իրականության միջև կապը հետազոտության հայեցակարգի տեսանկյունից հիմնական հասկացությունների սահմանման միջոցով: Սոցիոլոգիական ցանկացած հետազոտություն սկսվում է տեսությունից, որովհետև այն հետազոտողին զինում է իրականության մասին որոշակի գիտելիքներով: Նոր հետազոտության նախագիծը մշակելիս հետազոտողը մտովի փորձում է գտնել սահմանված հիմնախնդրի հնարավոր լուծումները, տալ հիպոթետիկ բացատրություններ: Հետազոտության հիմնախնդրի, օբյեկտի և առարկայի այդ նախնական վերլուծության ընթացքում հետազոտողն օգտագործում է որոշ հասկացություններ, որոնք նրա կողմից պլանավորվող հետազոտության հիմնաքարերն են: Առանց այդ հասկացությունների սահմանման և բովանդակության հստակեցման նա չի կարող սկսել հետազոտության դաշտային փուլը, որը ենթադրում է տարբեր գործիքների օգնությամբ չափումներ: Հարցազրույցները, հարցաթերթերով հարցումները նման չափումների օրինակներ են: Ահա այդ հիմնական հասկացությունների սահմանման փուլը նպաստում է, որ հետազոտողը և նրան անհրաժեշտ տեղեկություններ կրող-

ները կարողանան հաղորդակցվել, բացառվեն տարբմբռնումները, երկդիմի հարցադրումները և պատասխանները: Հետազոտության հիմնական հասկացությունների սահմանման շնորհիվ հետազոտողն ապահովում է գիտելիքների տեսական, վերացական հարցադրումից անցումը էմպիրիկ մակարդակի, որտեղ առանձին գործողությունների տեսքով տեսանելի, հետևաբար նաև դիտարկելի են բարդ վերացարկումների բովանդակությունները:

Սոցիոլոգիական հետազոտության ծրագիր կազմելը նաև ստիպում է հետազոտողին առաջադրել վարկածներ, որոնք հետազոտության հիմնախնդրին ուղղված ճշմարտանման, հիմնավորված բացատրություններ են: Հետազոտության դաշտային փուլում հավաքվող տեղեկությունը հետագայում ծառայում է այդ հավանական ենթադրությունների ստուգմանը, որպես կանոն՝ հաստատմանը: Դրանից հետո հետազոտողը ձեռք է բերում գիտականորեն ստուգված ու հիմնավորված գիտելիք, որը դառնում է ողջ հանրության սեփականությունը:

Սոցիոլոգիական հետազոտության ծրագիրը կազմելիս հետազոտողը ստիպված է ընտրել նաև տեղեկատվության մեթոդները, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները: Դրանք ընտրելիս հետազոտողը պետք է հաշվի առնի հետազոտության հիմնախնդրի, օբյեկտի և առարկայի առանձնահատկությունները, ինչպես նաև՝ իր ունեցած հնարավորությունները: Օրինակ՝ որևէ սոցիալական խմբի հասարակական կարծիքի ուսումնասիրություններում հարցման մեթոդն անփոխարինելի է, իսկ ահա երեխաներին առնչվող հետազոտական հիմնախնդիրների հետազոտման դեպքում գերադասելի են դիտարկումը և փորձագիտական հարցումը և այլն:

Այսպիսով, սոցիոլոգիական հետազոտության ծրագիրը հետազոտական խմբի բոլոր անդամների համար կատարում է յուրահատուկ ուղեցույցի դեր հետազոտության ողջ ընթացքում, նրա բոլոր փուլերում: Եվ եթե այդ փաստաթուղթը կազմելիս խումբը լավ է աշխատել, հիմնավորված ու փաստարկված է ամեն ինչ, ապա կարելի է վստահորեն ասել, որ հետազոտությունն արդյունավետ է լինելու և ստացվելու են արժեքավոր արդյունքներ:

Բանալի բառեր – *սոցիոլոգիական հետազոտության ծրագիր, խնդրահարույց իրադրություն, հետազոտության հիմնախնդիր, հետազոտության օբյեկտ, հիմնական հասկացությունների սահմանում, վարկած*

АРТАК ХАЧАТРЯН – ***Программа социологического исследования как залог его эффективности.*** – В статье рассматриваются вопросы, связанные с программой социологических исследований, в частности с требованием к определению проблемы и объекта исследования. Со ссылками на советскую и постсоветскую русскоязычную литературу некоторые определения в статье пересмотрены. Выражается мысль, что объектом социологического исследования являются в конечном счёте люди, поскольку без социального участия ни один социальный

феномен не проявляется. Проблема исследования – это вопрос, который поднимает исследователь, когда знакомится с ситуацией, причём она сама не несёт в себе социального противоречия. Далее развивается идея, что, когда исследователь сочетает проблемную ситуацию со своим восприятием предмета исследования, в его сознании возникает противоречие между ожиданиями и реальностью. В основе социологического исследования обычно лежит не социальная, как утверждают многие авторы, а научная проблема.

Ключевые слова: *программа социологического исследования, проблемная ситуация, проблема исследования, объект исследования, определение основных понятий, гипотезы*

ARTAK KHACHATRYAN – ***The Program of Sociological Research as a Guarantee of Research Effectiveness.*** – This article discusses some issues related to the program of sociological research, in particular, the requirements for defining the research problem and object. Referring to Soviet and post-Soviet Russian-language literature on sociological research, the author attempts to revise their definitions. The article expresses the idea that the object of sociological research is ultimately people because, without their social participation, no social phenomenon is manifested. The research problem is the question that the researcher raises when getting acquainted with a problematic situation. The author implies that the research problem carries a social contradiction. He develops the idea that the contradiction arises in the researcher's consciousness when he combines the problematic situation with his perceptions of the subject. It is then that a contradiction arises between his expectations and reality. The basis of sociological research is usually not a social problem, as many authors point out, but a research and scientific problem.

Key words: *program of sociological research, problem situation, research problem, research object, definition of main terms, hypothesis*

Ներկայացվել է՝ 01.10.2019
Գրախոսվել է՝ 18.10.2019
Ընդունվել է տպագրության՝ 03.12.2019